Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի ապրիլի 13 -ի
№ 111Լ որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2012 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ

Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ

Մուշեղ Կոշեցյան՝ հանձնաժողովի անդամ

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,

- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝

ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,

բ) ներդրումային ծրագրերի բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովն իր գործառույթների առաջնահերթություններից է համարում կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկի կողմից մշակված «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ՀՀ օրենքների

նախագծերի մշակման և քննարկման աշխատանքներին: Նախագծերի ընդունման արդյունքում առավել բարենպաստ պայմաններ կստեղծվեն գործարար միջավայրի համար, քանի որ կմիավորվեն արտադրական հզորությունների կառուցման (վերականգման) և արտադրության լիցենզիաները, կկրճատվեն էներգետիկայի բնագավառում լիցենզիաների տրամադրման, սակագների սահմանման և վերանայման, լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցման ժամկետները և այլն:

էներգետիկայի բնագավառում մատակարար-սպառող հարաբերություններում առաջացած խնդիրների կարգավորման և սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով 2012 թվականին մի շարք փոփոխություններ են կատարվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում:

2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված՝ սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների տևողության նոր ցուցանիշները, համաձայն որոնց քաղաքային համայնքներում արտապլանային որևէ ընդհատման տևողություն չպետք է գերազանցի 4 ժամը՝ նախկին 8 ժամի փոխարեն, իսկ գյուղական համայնքներում 8 ժամը՝ նախկին 16 ժամի փոխարեն: Կրճատվել է նաև պլանային ընդհատումների տևողությունը, և այն այժմ չպետք է գերազանցի 6 ժամը՝ նախկին 8 ժամի փոխարեն: Բացի այդ, կիրառության մեջ է դրվել տարեկան պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողության ցուցանիշը, որը քաղաքային համայնքների սպառողների համար գումարային առումով չպետք է գերազանցի 24 ժամը և 72 ժամը՝ գյուղական համայնքերի սպառողների համար: Հանձնաժողովը, կարևորելով այս ցուցանիշների պահպանումը, հերթական առաջընթաց քայլն է կատարել՝ 2012 թվականին ներդնելով պատասխանատվության նոր գործիք մատակարարի կողմից սահմանված ցուցանիշների խախտման դեպքերի համար: Այն գործում է 2013 թվականի հունվարի 1-ից, և մատակարարը էլեկտրամատակարարման ընդհատումների վերականգնման վերը նշված ժամերի, դիմումներին և բողոքներին պատասխանելու համար սահմանված ժամկետների, ինչպես նաև սպառողների իրավունքներին առնչվող մատակարարման կանոններով ամրագրված մի շարք այլ ընթացակարգերի խախտման յուրաքանչյուր դեպքի համար սպառողին կվճարի տույժ՝ վերջինիս ծախսած էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 20%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 2000 դրամը): Հաշվարկված տույժը կնվազեցվի սպառողին նախորդ ամսում ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման ենթակա գումարից՝ այդ մասին հատուկ

նշում կատարելով վճարման փաստաթղթում: Հարկ է նշել, որ տույժի վճարման գործընթացը մատակարարը կիրականացնի ավտոմատ եղանակով՝ առանց սպառողի կողմից որևէ դիմում կամ փաստաթուղթ ներկայացնելու պահանջի: Համանման փոփոխություններ են իրականացվել նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում: Պատասխանատվության այս գործիքը հիմնականում կիրառվում է զարգացած երկրներում, իսկ ԱՊՀ երկրների շարքում մատակարարների նկատմամբ նման պահանջներ դեռևս սահմանված չեն:

Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման և փոփոխության շնորհիվ հստակեցվել են մատակարար-սպառող հարաբերությունները, էլեկտրակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, նորոգման և շահագործման ծախսերին առնչվող հարցերը: Արդյունքում ամրագրվել է, որ սպառողների էլեկտրատեղակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, նորոգման և պահպանման) ծախսերն ու պատասխանատվությունը՝ անկախ դրանց պատկանելությունից, կրում է մատակարարը:

Փոփոխություն է կատարվել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 70-րդ կետում, որի համաձայն սպառողի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքը փոխարինել 5 սպասարկման օրվա ընթացքում՝ նախկին 10 սպասարկման օրվա փոխարեն:

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ստեղծելու նպատակով հանձնաժողովը փոփոխություններ է կատարել իր նախկին որոշումներում, որոնցով նվազեցվել են դիմող անձանց սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու նպատակով միացման և էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրեր կնքելու առավելագույն ժամկետները: Արդյունքում, մասնավորապես, 0.22կՎ լարման սպառողների սպառման համակարգերի միացման ժամկետները պարզ սխեմաների դեպքում կրճատվել են շուրջ 3 անգամ, 0.4կՎ լարման մինչև 30 կՎա հզորության սպառողներինը պարզ սխեմաների դեպքում՝ 9, իսկ նախագծային լուծումների անհրաժեշտության դեպքում՝ 3 անգամ: Այս ժամկետները կրճատվել են նաև մնացած բոլոր սպառողների դեպքում՝ միջինը 2 անգամ:

Էներգետիկայի բնագավառում լիցենզավորման գործընթացի հստակեցման նպատակով համապատասխան փոփոխություններ ու լրացումներ են կատարվել հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N4 որոշման մեջ, որով ի թիվս այլ փոփոխությունների, կրճատվել է արտադրող կայանների կառուցման (վերականգնման) լիցենզիայի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը:

Միևնույն ժամանակ հանձնաժողովի կողմից իրավական փորձաքննություն են անցել և գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 189 պայմանագրեր:

2012 թվականի ընթացքում հանձնաժողովը, գործելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, աշխատանքներ է իրականացրել բնագավառում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, մրցակցության խթանման, շարժական կապի ծառայությունների հասանելիության ապահովման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման ուղղությամբ:

Մասնավորապես, ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» պետական հիմնարկի հետ համագործակցության շրջանակում մշակվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ, որի հիմնական նպատակն է բնագավառում կարգավորման ընթացակարգերի պարզեցումը և վարչարարության ծավալների նվազեցումը, ինչը կբերի գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը, տնտեսվարման համար իրավական խոչընդոտների վերացմանը: Նշված օրենսդրական փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

Համաձայն այդ փոփոխությունների՝ հանվել են «ձայնային ծառայությունների մատուցում» եւ «տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում» պարզ լիցենզիաների տեսակները, էապես պարզեցվել է «հանրային

էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում)» բարդ լիցենզիայի տրման ընթացակարգը, իսկ 2015 թվականից բարդ լիցենզիան նույնպես կհանվի: Նախատեսվել է, որ տնտեսվարողների համար հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործունեության իրականացման միակ նախապայմանն է հանդիսանալու հանձնաժողովին գրավոր ծանուցելու պահանջը: Այսինքն՝ գործունեության լիցենզավորումից աստիճանական անցում է կատարվում դեպի գործունեության ծանուցման ընթացակարգի: Նմանօրինակ կարգավորում է նախատեսված Եվրամիության անդամ պետությունների իրավական ակտերով, որտեղ մասնավորապես սահմանված են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնելու վերաբերյալ ծանուցման ձևը, ծանուցման բովանդակությանը ներկայացվող պահանջները և այլն: Պարզեցվել և հստակեցվել են նաև «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներով կարգավորվող լիցենզավորման և դրա դիմաց վճարվող պետական տուրքին առնչվող բազմաթիվ դրույթներ:

Շարժական կապի ոլորտում հանձնաժողովի կատարած ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ տարածքի 18 մարզային բնակավայրեր և միջպետական ավտոճանապարհների առանձին հատվածներ GSM ծածկույթի բացակայության պատճառով զրկված են շարժական կապի ծառայություններից: Դա պայմանավորված է նշված բնակավայրերի բարդ աշխարհագրական տեղանքով, մարզկենտրոնից հեռու տեղակայված լինելով, բնակչության նվազ քանակով և ներդրումների ցածր տնտեսական արդյունավետությամբ: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ հանձնաժողովը 2012 թվականին աշխատանքներ է իրականացրել և արդեն 2013 հունվարի 23-ի նիստում ընդունված որոշմամբ շարժական կապի օպերատորների նկատմամբ սահմանվել է վերոնշյալ 18 բնակավայրերը GSM ծածկույթով ապահովելու պարտավորություն: Մասնավորապես, խնդրահարույց բնակավայրերը հավասարապես բաշխվել են շարժական կապի 3 օպերատորների միջև, և յուրաքանչյուր օպերատորի պարտավորեցվել է մինչև 2014 թվականի հունվարի 23-ը զարգացնել և արդիականացնել իր շարժական բջջային կապի ցանցը ծածկույթ չունեցող 6-ական բնակավայրում՝ ապահովելով շարժական հեռախոսակապի և ինտերնետի հասանելիությամբ:

Միաժամանակ, նշված որոշմամբ շարժական կապի 3 օպերատորներին հանձնարարվել է վարման սկզբունքով չափումների միջոցով մինչև 2013 թվականի ապրիլի 1-ը պարզել և հանձնաժողով ներկայացնել միջպետական ավտոճանապարհների այն հատվածների ցանկը, որտեղ ևս բացակայում է GSM ծածկույթը: Դրա հիման վրա հանձնաժողովը կընդունի

որոշում՝ պարտավորեցնելով օպերատորներին իրականացնել ցանցերի արդիականացման և ծածկույթի ապահովման աշխատանքներ ավտոճանապարհների այդ հատվածներում:

Հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N530Ա որոշմամբ ընդունվել են շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության համակարգի ներդրման սկզբունքներն ու ժամանակացույցը, որի համաձայն՝ նշյալ համակարգի ներդրման աշխատանքները պետք է իրականացվեն 2013 թվականի ընթացքում և այն պետք է գործարկվի 2014 թվականի հունվարի 1-ից:

Հեռախոսահամարների տեղափոխելիության ծառայության գործարկումը նախատեսված է խթանելու մրցակցությունը շարժական կապի օպերատորների միջև և ապահովելու սպառողների իրավունքն ու հնարավորությունը՝ պահպանել իրենց հեռախոսահամարները մեկ օպերատորից մեկ այլ օպերատորի մոտ տեղափոխվելիս: Սա նաև եվրոպական կառույցների հետ համագործակցության շրջանակում ստանձնած հանձնառություն է, որի իրագործման պարագայում կարգավորման կառուցակարգերն առավել համապատասխանեցված կլինեն եվրոպական չափանիշներին:

Հեռախոսահամարների տեղափոխելիության համակարգի տեխնիկական մոդելը հիմնվելու է զանգերի ուղղակի երթուղավորման մեթոդի և տեղափոխված հեռախոսահամարների կենտրոնացված տվյալների բազայի ներդրման վրա: Ընդ որում, բազայի ստեղծումն ու կառավարումն ապահովելու է շարժական կապի օպերատորների հիմնադրած ոչ առևտրային կազմակերպությունը, որն էլ կազմակերպելու և իրականացնելու է բազայի մատակարարի ընտրության մրցութային գործընթացը: Մրցութային փաթեթը և մրցույթի արդյունքները հաստատվելու են հանձնաժողովի գլխավորությամբ և շահագրգիռ մարմինների մասնակցությամբ ստեղծված համակարգող խորհրդի կողմից, որը և կատարելու է բազայի մատակարարի ընտրությունը: Հեռախոսահամարների տեղափոխելիությունը բաժանորդների համար իրականացվելու է անվճար հիմունքով, ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հետագայում, հանձնաժողովի սահմանած ժամանակացույցի համաձայն, նվազեցվելով մինչև 1 աշխատանքային օր:

Համարային ռեսուրսի օգտագործումը կանոնակարգելու նպատակով հանձնաժողովը սահմանել է հատուկ նշանակության ծառայությունների «1xx» կոդերի զբաղեցման կանոնները: Մասնավորապես, նախատեսվել է, որ «1xx» կոդերը կարող են օգտագործվել բացառապես արտակարգ իրավիճակներում, կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների դեպքերում, իրավասու

մարմինների կողմից՝ օպերատիվ արձագանքման գործառույթներ իրականացնելու համար, ինչպես նաև պետական կամ հանրային նշանակության կառույցների կողմից՝ հանրությանը մատուցվող տեղեկատվական բնույթի ծառայությունների տրամադրման համար: «1xx» կոդերը գործարկվում են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից, ընդ որում՝ կոդերի օգտագործումը, այդ թվում՝ դրանց գործարկումը և այդ կոդերին կատարվող զանգերի վերջնավորումը կոդերն օգտագործողների համար անվճար են:

Հանձնաժողովը մշակել և հաստատել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող անձանց կողմից իրենց ցանցերով մատուցվող ծառայությունների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ ինտերնետային կայքերում հրապարակվող տեղեկատվության ներկայացման ձևը: Օպերատորները պարտավորեցվել են իրենց ինտերնետային կայքերում եռամսյակային արդյունքներով տեղեկատվություն հրապարակել մատուցվող ծառայությունների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ: Սա պայմանավորված է ոլորտում գործող օպերատորների գործունեությունը առավել թափանցիկ և կանխատեսելի դարձնելու, ներդրումները խթանելու, ինչպես նաև սպառողների տեղեկացվածությունն ու ծառայությունների որակական չափանիշներն ապահովելու անհրաժեշտությամբ:

Նախորդ տարվա արդյունքներով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման ընթացքը բնութագրող հիմնական որակական և քանակական ցուցանիշների վերաբերյալ պետք է նշել հետևյալը.

- Երևան քաղաքում ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը 2012 թվականին հասցվել է 100 տոկոսի, իսկ ամբողջ հանրապետության մասշտաբով՝ 87 տոկոսի.
- Հանրապետության ողջ տարածքում գործում են շարժական բջջային կապի փոխադարձ ներթափանցման ծածկույթ ունեցող 3G տեխնոլոգիայի վրա հիմնված երեք ցանցեր.
- Երևան քաղաքի տարածքում գործում է 4G/ LTE տեխնոլոգիայի վրա հիմնված ցանց, որը կընդլայնվի նաև մարզերում.
- Երևան քաղաքի ավելի քան 90 տոկոս տարածքում, ինչպես նաև Աբովյան, Գյումրի և Աշտարակ քաղաքներում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: Նախատեսվում է, որ այս տեխնոլոգիայի վրա

հիմնված ցանցերը լայնածավալ տարածում կունենան նաև հանրապետության այլ բնակավայրերում:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հիմք ընդունելով 2012 թվականի էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, 2012 թվականի պետական բյուջեում ամրագրված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը, 2011 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների փոխհատուցման և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2012 թվականի ապրիլի 1-ից վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, ինչպես նաև «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման հաստատագրված ամսական վճարները:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու և, միաժամանակ, 2012 թվականի ապրիլի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճ թույլ չտալու նպատակով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող լրացուցիչ ֆինանսական ճեղքվածքը փակվել է «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների

հաշվարկներում ներառված շահույթի և մաշվածության ծախսային հոդվածների նվազեցման հաշվին:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 23 նորակառույց և վերանայվել 9 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները: Բացի այդ հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայվել են ևս 2 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի՝ համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: 2012 թվականի նոյեմբերին վերանայվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 112 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

2012 թվականին հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայվել և նվազեցվել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ –ի կողմից բնակչության ներտնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության տարեկան վճարի մեծությունը: Ընդ որում, երկու գազօգտագործող սարքավորում ունեցող բաժանորդների համար, որոնք կազմում են ընդհանուր բաժանորդների շուրջ 60 %-ը, նվազումը կազմում է շուրջ 20 %: Այս որոշումն ուժի մեջ է մտնելու 2013 թվականի հուլիսի 1-ից:

Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց պայմանագրի շրջանակում, Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկրվող և համապատասխան սուբյեկտներին հանձնվող բնական գազի, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանվող էլեկտրական էներգիայի ծավալների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով մշակվել են «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվության ձևերը:

Նպատակ ունենալով կրճատել լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության քանակն ու պարբերականությունը, լրամշակվել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող

կայանների կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկանտնեսական տեղեկատվության ձևը և համապատասխան փոփոխություններ են կատարվել տեխնիկանտնեսական տեղեկատվության ներկայացման կարգում:

2012 թվականին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 2012 թվականի նորոգման ժամկետների փոփոխման հետ կապված՝ ճշգրտվել են 2012 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները: Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2013 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2013 թվականի անվանական կազմը և, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

2012 թվականի փետրվարին սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով է դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ վարձակալության 7-րդ տարում մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները բազիսային սակագներում հաշվի առնելու համար: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ճշգրտված մանրածախ՝ ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, գումարային սակագինը հաշվարկվել և սահմանվել է 174.059 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը գործող սակագների համեմատ գրեթե նույնն է մնացել: Միաժամանակ, ճշգրտվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման մեծածախ ծառայությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագները:

«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մշակվել և հաստատվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարի հաշվարկման մեթոդիկան:

Հեռահաղորդակցության ոլորտում 2012 թվականի տարեվերջի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 46942 Մբիթ/վ, որը 2011 թվականի համեմատությամբ աճել է 1.5 անգամ:

Հարկ է նշել, որ մրցակցության արդյունքում աճել են միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերը, որն իր հերթին նպաստել է նաև այդ ծառայության սակագնի նվազմանը:





Ակնհայտ է, որ «ԱՅՓԻ» տարանցման շուկայում գրանցվել է սակագնի կայուն նվազում, որը 2012 թվականի տարեվերջի դրությամբ կազմել է 9000 դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով մոտ 2.6 անգամ:

2012 թվականին մանրածախ ինտերնետ հասանելիության միջին սակագինը 1Մբիթ/վ արագությամբ հոսքի համար կազմել է 4500 դրամ՝ մնալով անփոփոխ նախորդ տարվա համեմատ, իսկ 2010 թվականի համեմատ այդ սակագինը նվազել է մոտ 2 անգամ:

Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը, (այդ թվում՝ 3G/GPRS բաժանորդները) 2012 թվականին կազմել է 1914139:



Հանրապետությունում օրեցօր մեծանում են լայնաշերտ ինտերնետհասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որի բաժանորդների քանակը (առանց 3G/GPRS բաժանորդների) 2012 թվականին կազմել է 439408՝ առանց 3G տեխնոլոգիայով ծառայություններ ստացողների:

Էականորեն կրճատվել է հեռախոսակապի միջոցով (dial-up) ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը, մասնավորապես, 2010 թվականին գրանցված 12943 բաժանորդի փոխարեն 2011 թվականին գրանցվել է 4262 բաժանորդ՝ նվազելով շուրջ 3 անգամ, իսկ 2012 թվականին արձանագրվել է 2549 բաժանորդ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով շուրջ 1.7 անգամ:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, ինչը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը: Իրականացված աշխատանքների արդյունքում կրճատվել են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունը:

Կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների համակարգը կատարելագործելու նպատակով, հանձնաժողովը 2012 թվականին գազամատակարարման համակարգի ընկերությունների համար մշակել և հաստատել է հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, ինչը հնարավորություն է տալիս ընկերություններից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել ընկերությունների կազմակերպաիրավական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

2012 թվականին հանձնաժողովը կրճատել է նաև տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ծառայություններ մատուցող թվով 27 ընկերությունների կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը:

Սահմանված կարգին և ձևերին համապատասխան, նշված ընկերությունները ներկայացրել են կիսամյակային և տարեկան արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է նրանց ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն:

Ջրային համակարգի և էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ» և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ները ևս հանձնաժողովի

սահմանած ձևերին համապատասխան՝ ներկայացրել են եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Հաշվետու տարվա ընթացքում լրամշակվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը և հիմնական հեռախոսակապի ծավալային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվական ձևը:

Մշակվել է նաև «Հայփոստ» ՓԲԸ -ի կողմից մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների ծավալների վերաբերյալ տեղեկատվության ձևը և համապատասխան փոփոխություններ են կատարվել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգում:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումներն ապահովելու և վերահսկելու գործընթացի շրջանակում, 2012 թվականին հանձնաժողովը համաձայնություն է տվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և առևտրային բանկերի ու վճարահաշվարկային կազմակերպությունների միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերին, ինչպես նաև, համապատասխան փոփոխություններ է կատարել հատուկ հաշվից վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգում՝ հստակ ժամկետներ սահմանելով առևտրային բանկերի ու վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հավաքագրված գումարները «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշիվներին փոխանցելու համար:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովն իր ինտերնետային կայքում (www.psrc.am) հրապարակել է կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

Լիցենզավորումը կարգավորման այն հիմնական գործառույթն է, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել նրանց և սպառողների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կարգով կատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում տրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման (վերականգնման)՝ 12, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման՝ 1, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության 22 լիցենզիա:

2012 թվականի ընթացքում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի՝ 9, ձայնային ծառայությունների մատուցման՝ 3, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 10 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման՝ 28, սիրողական ռադիոյի՝ 1 և համարների զբաղեցման 7 թույլտվություն:

Բացի վերը նշվածից, էներգետիկայի բնագավառում ստացվել և բավարարվել է լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 42 հայտ, ինչպես նաև լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը վարձակալության տրամադրելու, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն կամ բաժնետոմսի (բաժնեմաս) վաճառելուն համաձայնություն տալու 95 դիմում: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ստացվել և բավարարվել են պարզ ընթացակարգով տրամադրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու 31 դիմում, իսկ ջրային համակարգում՝ ջրային համակարգի օգտագործման թույլտվության ժամկետների երկարաձգման 3 հայտ:

Հանձնաժողովի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացված և դատարանի կողմից 2012 թվականի ընթացքում քննված ընդհանուր թվով 17,8 մլն դրամ գումարի բռնագանձման

պահանջով 18 հայցերից 17-ը բավարարվել են՝ 16,2 մլն դրամ գումարի չափով, իսկ 1,4 մլն դրամ գումարի բռնագանձման վերաբերյալ մեկ վարչական գործի վարույթը կարճվել է՝ պարտապանին սնանկ ճանաչելու հիմքով: Հանձնաժողովի կողմից 2012 թվականին ՀՀ վարչական դատարան ներկայացված 12,2 մլն դրամ գումարի բռնագանձման պահանջով 14 հայցերի քննությունը կշարունակվի 2013 թվականին:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գտնվող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2012 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է շուրջ 6,5 մլրդ դրամ.

2012 թվականի պետական բյուջերի փաստացի մուտքեր (հազար դրամ)	
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ	387435.2
Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճար	176751.4
ՏՈՒՐՔԵՐ	**292864.4**
Էներգետիկայի բնագավառ	259716.0
Հեռահաղորդակցության բնագավառ	33148.4
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**5614551.3**
Ռադիոհաճախականության օգտագործման վճար	5520679.8
ՀՀ էներգետիկայի բնագավառում լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ֆինանսական երաշխիքներից մուտքեր	93871.5
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիառվող պատժամիջոցներից մուտքեր	17000.0
ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**6471602.3**

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից **լիցենզիաների պայմանների պահպանման** և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին՝ ինչպես ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող մոնթորինգի միջոցով:

2012 թվականին ուսումնասիրվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը

որոշ դեպքերում չի պահպանել նոր սպառողի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետները: Նշված խախտումների համար ընկերությունը ենթարկվել է ֆինանսական պատասխանատվության (տուգանքի)՝ 10 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Միևնույն ժամանակ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի մոնիթորինգի արդյունավետության բարձրացման նպատակով վերանայվել են հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների ձևերը:

Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակում հետևողական քայլեր է ձեռնարկում նաև ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի ուղղությամբ: 2012 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից հրապարակված գրաֆիկների ու փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Մասնավորապես, 2012 թվականի ընթացքում հանձնաժողովը հանրապետության 27 քաղաքային և 16 գյուղական համայնքների հետ աշխատանքներ է իրականացրել փաստացի ջրամատակարարման վիճակը պարզելու նպատակով և ի հայտ եկած շեղումների դեպքում ջրամատակարար ընկերություններին տվել է դրանք շտկելու վերաբերյալ հանձնարարականներ: Ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տվել նաև համակողմանիորեն գնահատել ընկերությունների կողմից մատուցվող ջրամատակարարման ծառայությունների որակը և քայլեր ձեռնարկել դրանց հետագա բարելավման ուղղությամբ:

Լրացումներ են կատարվել նաև «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջներում, ըստ որոնց մամուլով կամ հեռուստատեսությամբ, ինչպես նաև իրենց պաշտոնական ինտերնետային կայք-էջում ընկերությունները եռամսյակային ամփոփ տեղեկատվություն պետք է հրապարակել խմելու ջրի որակի խախտումների վերաբերյալ: Այն հնարավորություն կտա բարձրացնել բնակչության և այլ սպառողների իրազեկվածության աստիճանը խմելու ջրի որակի վերաբերյալ:

4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ

Կարգավորման կարևոր լծակներից է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցումը հանձնաժողովի հետ, ինչը հնարավորություն է տալիս վերահսկել ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարարական, ավելի էներգախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը: Հաշվի առնելով, որ կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և, հետևաբար, անմիջական ազդեցություն ունենում սակագների վրա, հանձնաժողովը ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման նպատակով իրականացնում է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի ուսումնասիրություն և վերլուծություն:

2012 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների 2011 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակվել են համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Քննարկվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից համաձայնեցման ներկայացված 2013-2015 թվականների և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013-2017 թվականների ներդրումային ծրագրերը և ընդունվել են համապատասխան որոշումներ:

Շարունակվել են նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկման աշխատանքները:

Հանձնաժողովը շարունակել է էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության վերլուծության աշխատանքները: Պարբերաբար իրականացվել են քննարկումներ նշված մատակարարների հետ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշներին առնչվող տեղեկատվության

հավաստիության բարձրացման, ինչպես նաև դրանց վերլուծության ընթացքում հայտնաբերված թերությունների և շեղումների վերացման նպատակով: Սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը, սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ ամփոփվում և հրապարակվում է հանձնաժողովի կայք-էջում:

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն ցուցանիշները բարելավելու ուղղությամբ տարվող աշխատանքները: Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Հաշվի առնելով նաև, որ սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներկայացվում են նաև հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը, սպառողները ևս կարող են հսկողություն իրականացնել մատակարարների կողմից հայտարարված գրաֆիկների պահպանման նկատմամբ:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում է 137 փոքր հիդրոէլեկտրակայան, ևս 72-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 218 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 658 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 165 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 585 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո Հայաստանի Հանրապետությունում կգործեն 209 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան 383 ՄՎտ գումարային հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1243 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2012 թվականին լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու կամ դրանց համապատասխան փորձաքննություններ անցած նախագծերը չներկայացնելու համար հանձնաժողովը կայացրել է 35 ընկերությունների ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ:

5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ

2012 թվականի ընթացքում սպառողներից ստացվել են 721 հարցադրում և բողոք, որոնցից 184-ը՝ գրավոր, 537-ը՝ հրատապ հեռախոսով և ընդունելությունների ընթացքում: Դրանցից 391-ը դրական լուծում են ստացել, 11-ի առնչությամբ մատակարար կազմակերպություններում անց են կացվել ուսումնասիրություններ, 21 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 298-ի վերաբերյալ տրվել են սպառիչ պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն: Սպառողների բողոքները տեղում ուսումնասիրելու նպատակով էլեկտրաէներգիայի, գազի և խմելու ջրի մատակարարների հետ համատեղ կազմակերպվել են քննարկումներ, իրականացվել են ստուգայցեր և ձեռնարկվել համապատասխան միջոցներ բարձրացված հարցերը կարգավորելու ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է հանձնաժողովի արդյունավետ փոխգործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ:

Լրատվական գործակալությունների, հեռուստաընկերությունների, ինչպես նաև տպագիր մամուլի միջոցով հետևողաբար ծանուցումներ և հաղորդագրություններ են ներկայացվել հանձնաժողովի նիստերի և հասարակական լսումների մասին, որտեղ քննարկվել են սպառողների շահերին առնչվող խնդիրներ: Սպառողների իրավունքների իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով հանձնաժողովի համապատասխան մասնագետները տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար հանդես են եկել ելույթներով և պարզաբանումներով:

Հանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական տեղեկատվությունը հրապարակվել է մամուլում, հասանելի դարձել էլեկտրոնային փոստով, համացանցով: Հանձնաժողովի կայքում շարունակաբար տեղադրվել է թարմ տեղեկատվություն, որից օգտվելով՝ հանրային ծառայությունների խնդիրներով և զարգացման հեռանկարներով հետաքրքրվող լրագրողները հանրության քննարկմանն են ներկայացրել վերլուծական բնույթի հոդվածներ՝ լրացուցիչ անգամ տեսանելի դարձնելով հանձնաժողովի թափանցիկ և հրապարակային գործունեությանը:

6. Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Զարգացման և առաջընթացի միջազգային փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով հանձնաժողովը շարունակում է ակտիվ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Հեռահաղորդակցության միջազգային միության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ:

Հանձնաժողովը 2012 թվականին մասնակցել է NARUC-ի կողմից կազմակերպվող «Սակագների սահմանման հիմունքները» թեմայով դասընթացին, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) և ԱՄՆ-ի հանրային ծառայությունների կարգավորման ազգային ասոցիացիայի (NARUC) կողմից ԱՄՆ-ի Այովա նահանգի հանրային ծառայությունները խորհրդի ներկայացուցիչների հետ կազմակերպված սեմինար-քննարկմանը, ինչպես նաև Մինեապոլիս (ԱՄՆ) քաղաքում՝ Սևծովյան տարածաշրջանի գործընկերության ծրագրի շրջանակում կազմակերպված՝ վերականգնվող էներգետիկական աղբյուրների ոլորտի կարգավորման և տեխնիկական ապահովության հարցերի վերաբերյալ ԱՄՆ-ի Մինեսոտա նահանգի հանրային ծառայությունների հանձնաժողով ուսուցողական շրջայցին:

INOGATE ծրագրի շրջանակնում 2012 թվականին հանձնաժողովը մասնակցել է Բրյուսել քաղաքում կազմակերպված INOGATE կազմակերպության համակարգող երկրների համաժողովին, ինչպես նաև ՀՀ և ԵՄ միջև ԽՀԱԱԳ ստեղծման շուրջ բանակցություններին:

Համագործակցելով Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հետ, հանձնաժողովը, 2012 թվականին մասնակցել է վերջինիս կազմակերպած սակագնային և գնագոյացման կոմիտեի նիստերին, միջազգային դասընթացներին, ինչպես նաև ERRA-ի կողմից ստեղծված էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագների տվյալների բազայում ներառվող տեղեկատվության պարբերաբար թարմացման աշխատանքներին:

Հանձնաժողովն անդամակցել է Եվրամիության արևելյան գործընկերության շրջանակում ստեղծված էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբին, որը միավորում է այդ ձևաչափում ներառված 6 անդամ երկրների կարգավորող մարմիններին:

Հանձնաժողովը կարևորում է արևելյան գործընկերության շրջանակում կարգավորողների խմբի ստեղծումը, քանի որ այն կնպաստի էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում համագործակցության ընդլայնմանն ինչպես ներառված երկրների, այնպես էլ Եվրամիության կարգավորող մարմինների հետ: Մասնակցությունն այս խմբի աշխատանքներին համահունչ է եվրաինտեգրման ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականությանն ու գործադրվող ջանքերին:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցությամբ իրականացվել են սահմանված գերակա ուղղություններով էլեկտրոնային հաղորդակցության կարգավորման ոլորտի բարեփոխմանն ուղղված աշխատանքներ: Այս աշխատանքների արդյունքում կձևավորվեն մի շարք կանոնակարգերի նախագծեր (հեռախոսահամարների տեղափոխելիության, շուկաների սահմանման և վերլուծության, ենթակառուցվածքների հասանելիության ապահովման վերաբերյալ), որոնք կհամապատասխանեն Եվրամիությունում գործող օրենսդրությանն ու կարգավորիչ պրակտիկային՝ ներառելով նաև էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի տեղական առանձնահատկություններով պայմանավորված տարրեր:

2012 թվականին զգալի աշխատանք է տարվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռահաղորդակցության բնագավառի զարգացման ուղղությամբ: Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջև կնքված հուշագրի, համատեղ աշխատանքներ են կատարվել՝ ուղղված ԼՂՀ տարածքում հեռահաղորդակցության ծառայությունների, այդ թվում՝ շարժական և ամրակցված

հեռախոսակապի, «ԱՅՓԻ» տարանցման և ինտերնետ հասանելիության ծառայությունների առավել ընդլայնմանն ու սակագների մատչելիության ապահովմանը:

7. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հաստատված բյուջեն

Համաձայն «Հանրային ծառայությունները կարագովորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված պահպանման ծախսերի մեծությունը կազմել է 417970.9 հազ.դրամ, որից 404810.9 հազ.դրամը հատկացվել է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը, իսկ 13160.0 հազ.դրամը՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը: